Արվեստի ծրագիր

7-9-րդ դասարաններ

1. Արվեստ դասընթացի **նպատակն** ու **խնդիրներն** են՝

- ապահովել սովորողների գեղագիտական դաստիարակության շարունակականությունը և ամբողջականությունը:
- ծանոթացնել համաշխարհային, ինչպես նաև հայ արվեստի նշանավոր հուշարձաններին
- զարգացնել գեղագիտական ճաշակ
- սովորեցնել տարբերակել արվեստի տեսակները, ժանրերը
- զարգացնել երևակայությունը, վերլուծական միտքը

2. Ուսումնական միջավայրը ՝

- **ուսումնական կաբինետը՝**

դասասենյակ, որն անհրաժեշտության դեպքում կունենա մթնեցնելու հնարավորություն (էլեկտրոնային գրատախտակի դիտելիությունը բարելավելու համար), աթոռներ, սեղաններ, պահարաններ, համացանցին միացված անհրաժեշտ ծրագրերով ներբեռնված համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ կամ պրոյեկտոր, ձայնային ուժեղարար, անլար ինտերնետ, էլեկտրոնային գրիչներ, պահարաններում՝ բառարաններ՝ դիցաբանական, կերպարվեստի, արվեստին վերաբերող անհրաժեշտ գրականություն, տեսասկավառակներ:

- **համացանցում ուսուցման միջավայրը** ՝

արվեստին և համաշխարհային մշակույթին վերաբերող կայքեր, ուսուցչի, սովորողների բլոգներ, ուսուցչի էլեկտրոնային օրագիր, կրթահամալիրի, գրադարանի կայք:

- **դասավանդողին անհրաժեշտ աշխատանքային գործիքներ և նյութեր՝**

թվային ձայնագրիչ, ֆոտոխցիկ, ուսումնական նյութեր (օգտակար կայքերի հղումներ), ուսումնական ֆիլմեր, ուսուցչի բլոգ, էլեկտրոնային օրագիր, էլեկտրոնային մատյան:

- **սովորողին անհրաժեշտ աշխատանքային գործիքներ և նյութեր**

անհատական նոթբուք կամ նեթբուք, ֆոտոխցիկ, էլեկտրոնային ռեսուրսներ, անձնական բլոգ, կայք, էլեկտրոնային թղթապանակ:

- **ուսումնական նյութեր՝**

Արվեստին, մշակույթին վերաբերող գրքեր, ալբոմներ, օն-լայն բառարաններ, վիրտուալ թանգարաններ.

Ինտերնետային կայքեր և բլոգներ՝

- Դասավանդողի բլոգ- http://arminebabayan.blogspot.com/
- Կերպարվեստի վիրտուալ թանգարան-http://smallbay.ru/
- Արվեստի պատմություն- http://art-history.ru/
- Համաշխարհային արվեստի ապտմություն- http://artyx.ru/
- Հայաստանի ազգային պատկերասրահ- http://www.gallery.am/hy/
- Հայկական պատմական հուշարձաններ - http://www.armenianarchitecture.am/public/search.php
- Հայ կերպարվեստի պատմություն- http://www.iatp.am/culture/armfineart/

(ցանկը ենթակա է լրացման)

Բովանդակություն՝

- 7-րդ դասարան
- 8-րդ դասարան
- 9-րդ դասարան

4. Ծրագրային նյութի յուրացման կազմակերպումը՝

1) Ուսումնական պարապմունքների նկարագրություն՝

- **Դասերը** կազմակերպվում են ըստ ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակի և կրթահամալիրյան օրացույցի: Սովորողների քանակը 20-22, որոնց թվում նաև կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ: Դասերը կազմակերպվում են ուսումնական կաբինետում, ընթերցասրահում՝ 45 րոպե տևողությամբ և համապատասխան թվային միջոցների և համակարգչային ծրագրերի, ուսումնական նյութերի կիրառմամբ:
- **Ուսումնական նախագծերի-** ուսումնական նախագծերը կարող են իրականցվել կիսամյակի, ուստարվա, արձակուրդների, ճամբարների ընթացքում: Նախագծերի նպատակն է խորապես ուսումնասիրել կոնկրետ թեմա, հարստացնել արվեստի վերաբերյալ էլեկտրոնային շտեմարանը:
- **Ուսումնական-հայրենագիտական ճամփորդություններ-** նպաստում են գործնականում կիրառելու արվեստ առարկայից ստացած գիտելիքները:
- **Ճամբարներ-**Ճամբարները կազմակերպվում են տարեկան երկու անգամ՝ ձմեռային (դեկտեմբեր ամսին) և ամառային (հունիս ամսին), որոնց մասնակցությունը սովորողների համար պարտադիր է: Ճամբարների ընթացքում նախատեսվում է նախագծերի իրականացում, ուսումնա-հայրենագիտական ճամփորդություններ:
- **Կրթահամալիրային միջոցառումներ-** սովորողները մասնակցում են նաև կրթահամալիրի 2012-2013 ուսումնական օրացույցով նախատեսված միջոցառումներին:

2) Ուսումնական նյութերի, միջոցների օգտագործման մեթոդական նկարագրություն՝

- **Գրադարանի կայք-** Սովորողները և դասավանդողը գրադարանի կայքը օգտագործում են ինչպես դասագրքեր և ուսումնական փաթեթներ ներբեռնելով, այնպես էլ իրենց կողմից ստեղծված ուսումնական նյութեր, փաթեթներ տրամադրելով:
- **Դասավանդողի բլոգ, կայք-** Դասավանդողի բլոգը դառնում է ուսումնական միջավայր, որտեղ սովորողը կարող է ծանոթանալ արվեստին վերաբերող նորությունների, հոդվածների, գտնել ուսումնական նյութեր և ֆիլմեր, ստանալ առաջադրանքներ:
- **Էլեկտրոնային օրագիր-**Էլեկտրոնային օրագրի միջոցով դասավանդողը սովորողին ուղարկում է տնային առաջադրանքը, դասին վերաբերող բոլոր նյութերը կամ համապատասխան հղումները: Սովորողը իր կատարած առաջադրանքները տեղադրում է իր էլեկտրոնային օրագրում կամ ուղարկում է դասավանդողին: Էլեկտրոնային օրագիրը դասավանդող-սովորող կապը դարձնում է անընդհատ:
- **Էլեկտրոնային թղթապանակ-** Թղթապանակը սովորողների և դասավանդողի տարվա ընթացքում կատարած աշխատանքի ամբողջությունն է, որը տեղադրվում է skydrive-ում: Էլեկտրոնային թղթապանակ կարող է հանդիսանալ նաև բլոգը:

3) Սովորողի ուսումնական գործունեության ձևերը. դրանց հիմնական բովանդակությունը, կազմակերպումը

Ուսուցման գործընթացում, կախված թեմայից, սովորողների տարիքային առանձնահատկություններից, տվյալ դասի համար գոնծունեության ձևերը կարող են լինել.

- արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, կերպարվեստի ստեղծագործությունների դիտում
- բանավեճեր, քննարկումներ, վերլուծություններ
- օրացույց նշանավոր արվեստագետների մասին. յուրաքանչյուր օր ներկայացնել փոքրիկ տեսանյութ տվյալ օրվա հոբելյանի մասին
- խաղերի, մրցույթների կազմակերպում
- անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում
- գրավոր աշխատանք դասարանում, տանը և հեռավար՝ թվային միջոցների կիրառմամբ

- ինքնուրույն աշխատանք դասագրքի և էլեկտրոնային առաջադրանքների միջոցով՝ կայքի, անհատական բլոգների գործածմամբ էլեկտրոնային գրատախտակի և գրիչների, էլեկտրոնային օրացույցի, էլեկտրոնային թղթապանակի, ֆոտոխցիկի, համացանցի, համակարգչային ծրագրերի օգտագործում
- կրթհամալիրի ուսպլանով նախատեսված ստուգատեսներին և մեդիաօլիմպիադաներին մասնակցություն
- հետազոտական աշխատանքների կատարում
- ուսումնահասարակական նախագծերին, ուսումնական ճամփորդություններին, ճամբարներին մասնակցություն:

4) Դասարանում և տանը ուսումնական պարապմունքի, ինքնակրթության կազմակերպման մեթոդական նկարագրություն

Արվեստ դասընթացի կարևոր բաղադրիչն է ուսումնասիրվող նյութի վերաբերյալ ֆիլմերի, նկարիներ դիտումը, վերլուծումը, քննարկումը: Դասարանում իրականացվում է անհատական և խմբային աշխատանք (կիրառվում են էլեկտրոնային գրիչները), համաշխարհային արվեստի գործերի վերլուծում, համադրում: Նեթբուք-նոթբուքներով դասարանում կատարված հանձնարարությունը ուղարկվում է դասավանդողին: Ինքնակրթությունը կատարվում է ելնելով թե՛ սովորողի անհատական նախասիրությունից, թե՛ դասավանդողի հանձնարարությունից, որի ընթացքում սովորողը ավելի բազմաշերտ է դարձնում ստացած գիտելիքները, համալրում նոր տեղեկատվությամբ, ընդլայնում գիտելիքները, կատարում հետազոտական աշխատանք, որի արդյունքները հրապարակվում են անհատական բլոգում և կրթհամալիրի կայքում:

5) Հատուկ ուսուցում՝

- Հատուկ կարիքներով սովորողի ուսուցումը անց է կացվում իր կարիքին և կարողություններին համապատասխան:

6) Ստուգում և կիսամյակային, տարեկան գնահատման կարգը՝

Գնահատումը իրականացվում է դասավանդողի կողմից՝ համապատասխան հետևյալ 100 միավորանով սանդղակի

Ներկայություն	10 %
Դասարանական աշխատանք (անհատական և խմբային)	15 %
Տնային աշխատանք	15 %
Ստուգումներ	15 %
Մեդիաօլիմպիադաների մասնակցություն	10 %
Ճամփորդությունների մասնակցությունը	10 %
Ուսումնա-հետազոտական աշխատանք	20 %
Ուսումնական թղթապանակի կամ բլոգի	5 %

օգտագործում	

100-90	10-9
89-70	8-7
69-50	6-5
50-40	5-4
39-0	անբավարար

Դասարանական աշխատանք. Գնահատվում է սովորողի մասնակցությունը քննարկումներին, բանավեճերին, խմբային և անհատական աշխատանքներին, գրավոր և բանավոր պատասխանները:

Տնային աշխատանքը ներառում է անցած նյութի ամրապնդում, լրացուցիչ տեղեկություններից հավաքում, ուսումնական նյութերի ստեղծում:

Ստուգումներ. Ստուգումները լինում են յուրաքանչյուր թեմայի ավարտին, կիսամյակի վերջում և տարեվերջին: Ստուգամն ձևերից են՝ թեստային առաջադրանքները, ինքաստուգումները, հեռավար (մեդիաստուգում):

Ճամփորդությունների մասնակցությունը դիտարկվում է որպես ուսումնական գործընթացի գործնական մաս: Գնահատվում է սովորողի վարքը, մասնակցությունը, կայքում ներկայացված նյութերը:

Ուսումնա-հետազոտական աշխատանքը կարող է լինել երկարաժամկետ և կարճաժամկետ: Գնահատվում է ինքնուչույնությունը, վերլուծական մտածողությունը, աղբյուրների բազմազանությունը և ներկայացման ձևը:

Ուսումնական թղթապանակի կամ բլոգի օգտագործում. Ուսումնական թղթապանակներում կամ բլոգում կարող են պահպանվել սովորողի կատարած տնային, դասարանական առաջադրանքները, թեստերը (ուսումնական ծրագրով նախատեսված), ինքնուրույն հետազոտական աշխատանքները, ուսումնական ֆիլմերը, ձայնագրությունները:

7) Սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներ

Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր սովորող պետք է կատարի հետազոտական աշխատանք: Հետազոտական աշխատանքների վերնագրերը սովորողներին ներկայացվում է յուրակքանչյուր թեմային համապատասխան: Կախված հետազոտական աշխատանքի բնույթից՝ այն կարող է լինել նաև խմբային:

Հետազոտական աշխատանքում գնահատվելու է աշխատանքի ամբողջական և մատչելի ներկայացումը, թվային միջոցների կիրառումը, ինչպես նաև ինքնուրույն վերլուծական աշխատանքը:

8) Ուսումնական ճամփորդություններ՝

- Գառնու տաճար,
- Հռիփսիմե, Գայանե, Էջմիածնի Մայր տաճար, Զվարթնոց,
- Աշտարակի Կարմրավոր, Մարիանե, Սպիտակավոր ,
- Սաղմոսավանք, Հովհաննավանք,
- Արենու Սբ. Աստվածածին, Նորավանք եկեղեցիները,
- Ազգային պատկերասրահ,
- Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարան,
- Ցուցահանդեսներ՝ ըստ անհրաժեշտության:

(ցանկը ենթակա է լրացման)

9) Սովորողի ձեռք բերած գիտելիքների և կարողությունների գործնական կիրառությունների ձևերը՝

- սեփական մշակութային ուղղության ընտրություն,
- համաշխարհային և ազգային արվեստի ստեղծագործությունների գնահատում,
- դասական և ժամանակակից արվեստի ստեղծագործությունների մասին սեփական կարծիքի ձևավորում և արտահայտում,
- ժամանակակից հայ արվեստագետների մասին պատմող նյութերի, ֆիլմերի ստեղծում: